ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6934/05/21
Նախագահող դատավոր՝ Հ. Այվազյան
Դատավորներ՝ Կ. Ավետիսյան
Ռ. Խանդանյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6934/05/21**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 6-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.10.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Հադի Գուլոզիի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի իրավաբանական վարչության 05.04.2021 թվականի թիվ 76 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հադի Գուլոզին պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության 05.04.2021 թվականի թիվ 76 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.03.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.10.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.03.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 258-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետը, 260-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու ժամկետները հաշվարկելիս հնարավոր չէ առաջնորդվել բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ժամեկտներով, քանի որ դրանք կհակասեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետներին, ինչը հաշվի չի առել Վերաքննիչ դատարանը:

Քննարկվող դեպքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է 07.02.2021 թվականին, իսկ վիճարկվող որոշումը կայացվել է 05.04.2021 թվականին, այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված տույժ նշանակելու մասին որոշման ընդունման երկամսյա ժամկետը պահպանված է:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն դիտարկումը, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ հայցվորին չի տրվել իրական հնարավորություն ներկայացնելու հայտարարագիր, չի բխում սույն գործով հաստատված փաստերից:

Վերաքննիչ դատարանի նման մոտեցումն անհիմն է և հանդիսանում է գործի ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունք և հակասում է ՀՀ մաքսային օրենսգրքի 258-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով ամրագրված իրավական նորմի պահանջին:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն փաստին, որ ապրանքների հայտարարագրումը սահմանված կարգով իրականացնելու պարագայում հայցվորը պետք է մեքենան կանգնեցներ սահմանված վայրում (նախքան մաքսային մարմնի աշխատակցին հասնելը) և ձեռնարկեր միջոցներ՝ ապրանքը հայտարարագրելու համար: Հայցվորը բացի այն, որ չի կանգնեցրել մեքենան սահմանված վայրում, չի հայտարարագրել ապրանքը, նաև փորձել է թաքցնել մեքենայում ադամանդների առկայության փաստը՝ մաքսային մարմնի աշխատակցի՝ հայտարարագրման ենթակա ապրանքներ ունենալու վերաբերյալ հարցին տալով բացասական պատասխան:

Վերաքննիչ դատարանը շեղվել է օրենքի ուղղակի պահանջից և սահմանել է լրացուցիչ պահանջներ, այն է՝ որոշելու՝ անձը համարվում է հայտարարատու, թե՝ ոչ: Մինչդեռ օրենքի պահանջը հստակ է և պարզ, իսկ լրացուցիչ չափանիշների ներդրումը չի բխում ՀՀ մաքսային օրենսգրքի պահանջներից: Հայցվորը չի դրսևորել որևէ նախաձեռնություն կամ կամարտահայտություն հայտարարագրելու ապրանքները՝ դրսևորելով խուսափողական վարքագիծ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.10.2024 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության 06.02.2021 թվականի «Մաքսային զննման (տեսազննման)» թիվ 06022021U/12021 ակտով արձանագրվել է, որ մաքսային հսկողության շրջանակներում նույն թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, զննման է ենթարկվել ԻԻՀ-ից ՀՀ ժամանած ԻԻՀ քաղաքացի Հադի Գուլռոզի Հոսսեին Ալի-ի կողմից շահագործվող «TOYOTA HILUX» մակնիշի ▪▪▪▪▪▪▪▪[1] պետհամարանիշի ավտոմեքենան, ինչի արդյունքում մեքենայի առջևի նստատեղերի մեջտեղի խցիկում գտնվող վարորդի դրամապանակի միջից հայտնաբերվել են ինքնակպչուն ժապավենով փաթաթված մաքսային հսկողությունից թաքցրած պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ առկա էին «+6 ½ White 15.61» և «-6 ½ White 20.37» գրառմամբ թվով 2 պոլիէթիլենային տոպրակներ, յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմել են 3,5գ (404 հատ) և 4,4գ (1626 հատ): Նշված պոլիէթիլենային տոպրակներում առկա էին ադամանդին նմանվող քարեր, որոնք ըստ Հադի Գուլռոզիի հայտարարության՝ ադամանդներ են: Դրամապանակի մեջ առկա էին նաև բանկային քարտեր, այցեքարտեր և թղթադրամներ **(հատոր 1-ին, գ.թ. 75-78).**

2) Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության ՄԴՊՎ ՍՏԲ Մեղրիի բաժնի մաքսային տեսուչի 07.02.2021 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրությամբ արձանագրվել է, որ մաքսային հսկողության շրջանակներում նույն թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, զննման է ենթարկվել ԻԻՀ-ից ՀՀ ժամանած ԻԻՀ քաղաքացի Հադի Գուլռոզի Հոսսեին Ալի-ի կողմից շահագործվող «TOYOTA HILUX» մակնիշի ▪▪▪▪▪▪▪▪[2] պետհամարանիշի ավտոմեքենան, ինչի արդյունքում մեքենայի առջևի նստատեղերի մեջտեղի խցիկում գտնվող վարորդի դրամապանակի միջից հայտնաբերվել են ինքնակպչուն ժապավենով փաթաթված մաքսային հսկողությունից թաքցրած պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ առկա էին «+6 ½ White 15.61» և «-6 ½ White 20.37» գրառմամբ թվով 2 պոլիէթիլենային տոպրակներ, որոնցում առկա էին ադամանդին նմանվող քարեր, որոնք ըստ Հադի Գուլռոզիի հայտարարության՝ ադամանդներ են: Նշված պոլիէթիլենային տոպրակները կշռվել են «Amput» մոդելի կշեռքով և զանգվածները համապատասխանաբար 3,5գ (404 հատ) և 4,4գ (1626 հատ) համաքաշով: Դրամապանակի մեջ առկա էին նաև բանկային քարտեր, այցեքարտեր և թղթադրամներ **(հատոր 1-ին, գ.թ. 79-80).**

3) Հադի Գուլռոզիի ներկայացուցիչ Նարեկ Եղիազարյանը 22.03.2021 թվականին տված բացատրությամբ հայտնել է, որ Հադի Գուլռոզին իր կողմից վերցված գույքը ստացել է Սուրանա Դիպակ Կիրկումարից՝ ՀՀ-ում իրավատիրոջը՝ Տիգրան Մեսրոպյանին հանձնելու հանձնարարությամբ: Նրան հանձնարարվել է պատշաճ կատարել բոլոր ընթացակարգերի պահանջները, որի հնարավորությունը սակայն չի ունեցել, քանի որ մաքսավորների կողմից գույքը վերցվել է, նա էլ բանավոր ասել է, որ իր մոտ կա գույք, սակայն այն վերցվել է **(հատոր 2-րդ, գ.թ. 37).**

---

[1] Հանդիսանում է անձնական տվյալ

[2] Հանդիսանում է անձնական տվյալ

4) Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության ՄԴՊՎ ՍՏԲ Մեղրիի բաժանմունքի մաքսային տեսուչի 24.03.2021 թվականի հայտարարությամբ նշվել է, որ մաքսային տեսուչը Մեղրիի մաքսային կետի բաժնի ուղևորների համար նախատեսված զննման գոտում հարցրել է Հադի Գուլոզիին, թե արդյոք նա իր մոտ ունի հայտարարագրման ենթակա ապրանքներ, թե՝ ոչ, ինչին նա պատասխանել է, որ չունի այդպիսի ապրանքներ: Այնուհետև, նա «TOYOTA HILUX» մակնիշի ▪▪▪▪▪▪▪▪[3] պետհամարանիշի ավտոմեքենայով մուտք է գործել ավտոմեքենաների համար նախատեսված զննման գոտի, որտեղ եղել են մաքսային տեսուչներ, և Հադի Գուլոզին նրա բանավոր հարցմանը, թե արդյոք ունի հայտարարագրման ենթակա ապրանքներ, պատասխանել է, որ չունի հայտարարագրման ենթակա ապրանքներ **(հատոր 2-րդ, գ.թ. 51)**:

5) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 05.04.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 76 որոշմամբ Հադի Գուլոզին ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 6.051.902 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 69-72)**:

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 258-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերության խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորող օրենսդրական ակտերի կիրառման համատեքստում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված արարքի զանցակազմն առկա է այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցով մաքսային սահմանը հատելու ժամանակ մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ հայտարարագրման ենթակա ապրանքների առկայության մասին բանավոր հարցմանն ի պատասխան անձը հայտնում է այդպիսի ապրանքների բացակայության մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների

[3] Հանդիսանում է անձնական տվյալ

առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ սահմանադրական դատարանը 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իրավակարգավորումների տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է որևէ վարչական վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյո՞ք գոյություն ունեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով իրականացվող վարչական վարույթը կարգավորող հատուկ օրենքներ, և, եթե այդպիսիք գոյություն ունեն, ապա պետք է որոշի, թե որքանո՞վ են հատուկ օրենքով կարգավորված իր կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:

Հարկ է նկատել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը չի բացառվում, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում *(տե՛ս, Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը)*:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով:

Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթ սկսելու հիմքերից է իրենց լիազորություններն իրականացնելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային կանոնների խախտման դեպքերի հայտնաբերումը:

Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթն սկսվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմելով:

Օրենսգրքի 221-րդ հոդվածով կարգավորվել են մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով մաքսային մարմինների որոշումների տեսակները, դրանց ներկայացվող բովանդակային պահանջները, ինչպես նաև՝ այդ որոշման հանձնման կարգը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգիրքը կարգավորում էր մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննության կարգը, որը սահմանվում էր նույն օրենսգրքով, ինչպես նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով: Այսինքն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանող իրավական ակտերը ՀՀ մաքսային օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն էին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, իսկ այն դեպքերում, երբ առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանված են այլ օրենքներով և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ապա այդ դեպքում կիրառման են ենթակա այդպիսի առանձնահատկություններ սահմանող օրենքների և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի առանձնահատկությունները կանոնակարգվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի նկատմամբ միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետներ, ուստի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետների մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը վարչական վարույթի առավելագույն ժամկետ սահմանելու մասով կիրառելի չէ *(տե՛ս, Յողիկ Ավետիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/8942/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.12.2022 թվականի որոշումը):*

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով մաքսային մարմինների որոշումների կայացման ժամկետներ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված չեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը:

Այսպես. վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը մեկնարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ և եզրափակվում նույն օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հետևյալ որոշումներից որևէ մեկի կայացմամբ. վարչական տույժ նշանակելու մասին որոշում կամ գործի վարույթը կարճելու մասին որոշում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին,

համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար *(տե՛ս, Սուրեն Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Ի ամփոփումն վերոգրյալի՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որը մեկնարկում է վարչական արձանագրության կազմմամբ (հարուցման փուլ), որի ընթացիկ փուլում վարչական վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) խնդիրն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված ապացույցների գնահատման արդյունքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ պարզել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հանգամանքները, և երկամսյա ժամկետում վարչական վարույթը եզրափակել կա՛մ վարչական տույժ նշանակելու մասին որոշմամբ, կա՛մ վարույթը կարճելու մասին որոշմամբ (եզրափակիչ փուլ) *(տե՛ս, Աշոտ Ազիզյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/9371/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.10.2023 թվականի որոշումը):*

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մաքսային հսկողությունն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի նկատմամբ բացի մաքսային օրենսդրությունից, կիրառելի է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը: Հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները նշված հարաբերությունների նկատմամբ կարող էին կիրառելի լինել միայն այնքանով, որքանով ՀՀ մաքսային օրենսգրքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված չէին վարչական վարույթի առանձնահատկություններ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վարչական մարմինը մաքսային հսկողություն իրականացնելիս պարտավոր էր պահպանել իրավական ակտերի կիրառելիության հետևյալ հերթականությունը. ՀՀ մաքսային օրենսգիրք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, այնուհետև՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք: Ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդող իրավական ակտը կիրառելի կարող է լինել միայն այն դեպքում, երբ որևէ հարց կարգավորված չլինի նախորդող իրավական ակտով: Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները միաժամանակ կիրառվել չեն կարող, քանի որ նույն հարցի վերաբերյալ տարբեր իրավական ակտերում առկա իրավակարգավորումների պարագայում կիրառման նախապատվությունը տրվում է հատուկ օրենքին:

Վերոգրյալի համատեքստում՝ անդրադառնալով մաքսային սահմանով հայտարարագրման ենթակա ապրանքների՝ մաքսային մարմնից թաքցնելու միջոցով տեղափոխմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 337-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվել 2000 թվականի հուլիսի 6-ի Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 13-րդ բաժինը:

Նույն օրենքի 338-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերը քննվում են 2000 թվականի հուլիսի 6-ի Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 13-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

Մաքսային կանոնների խախտման և դրանց համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ նորմերը նախատեսվում էին 06.07.2000 թվականին ընդունված, 17.10.2022 թվականին ուժը կորցրած ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ գլխով:

Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր նպատակաուղղված արարք սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների ամբողջություն է, որտեղ առանձնացվում են ներգործության օբյեկտը և դրա նկատմամբ ներգործող սուբյեկտի հոգեբանական վերաբերմունքը: Հետևաբար, արարքը զանցակազմ որակելու համար անհրաժեշտ է զանզակազմի բաղատարարրերի առկայություն, որոնք են՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը և սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը:

Օրենսգրքի իրավակարգավորումների իմաստով՝ մաքսային կանոնների խախտման բաղադրատարրերը հետևյալն են. **սուբյեկտն** իրավախախտումը կատարող անձն է, **օբյեկտիվ կողմը**՝ վերջինիս կողմից կատարվող արարքը, որը կարող է դրսևորվել և՛ գործողությամբ, և՛ անգործությամբ, **օբյեկտը** ՀՀ մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ **սուբյեկտիվ կողմն** արտահայտվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ մաքսային կանոնները խախտելու ձևով *(տե՛ս, Աննա Խլղաթյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ2/0012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.01.2025 թվականի որոշումը):*

Օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ

եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի չափով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձանց պատկանող տարածքներում, շինություններում կամ տրանսպորտային միջոցներում պահվում են մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքներ կամ հատուկ պատրաստված գաղտնարաններ, որոնք օգտագործվում են գաղտնի ճանապարհով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու նպատակով, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք ունեն կատարել տարածքների, շինությունների, տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների մաքսային զննում, որին պարտադիր կարգով մասնակից են դարձվում տվյալ օբյեկտների ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրվում են նաև մասնագետներ:

Վկայակոչված նորմերից և իրավական դիրքորոշումից հետևում է, որ անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն, համարվում է մաքսային կանոնների խախտում, որոնց դիտավորյալ խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Այդպիսի իրավախախտում է համարվում մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը, որն իրականացվում է գաղտնարաններ օգտագործելով, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով, և եթե բացակայում են հանցագործության հատկանիշները: Այսինքն՝ մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման իրավախախտումն առկա է այն պարագայում, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս գաղտնարաններ օգտագործելու, ապրանքներին այլ տեսք տալու կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով փորձում է թաքցնել հայտարարագրման ենթակա ապրանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված զանցակազմով սահմանված գաղտնի տեղափոխման եղանակներին, արձանագրել է, որ գաղտնարանների օգտագործմամբ վերոնշյալ իրավախախտումը կարող է դրսևորվել այն պարագայում, երբ անձը թաքցնում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող անօրինական կամ հայտարարագրման ենթակա ապրանքն իրը թաքցնելու համար հատուկ արտադրված վայրերում (որոնց գործառնական նպատակը միայն ապրանքների ապօրինի տեղափոխումն է մաքսային սահմանով) կամ հատուկ սարքավորված կամ հարմարեցված վայրերում (այսինքն՝ տվյալ վայրը (իրը), որտեղ թաքցվում է անօրինական կամ

հայտարարագրման ենթակա ապրանքը, ենթարկվել է դիզայնի փոփոխությունների, կամ այլ փոփոխությունների) (օրինակ՝ ապրանքները մեքենայի դիզայնով չնախատեսված խորշում, կրկնակի ճամպրուկի մեջ, հագուստի երեսպատման տակ գտնվող խոռոչներում տեղափոխելը և այլն):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ձևով վերոնշյալ իրավախախտումը կարող է դրսևորվել ապրանքները թաքցնելու տարբեր բարդ մեթոդների կիրառմամբ (օրինակ՝ ապրանքների ֆիզիկական կերպով թաքցնելու միջոցով), երբ մաքսային մարմնի պաշտոնատար անձը չի կարող դրանք հայտնաբերել սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման՝ որպես մաքսային հսկողության բացառիկ ձևի, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման *(տե՛ս, Աննա Խլղաթյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ2/0012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.01.2025 թվականի որոշումը):*

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 258-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ այն դեպքում, երբ ֆիզիկական անձն ուղևորվում է տրանսպորտային միջոցով, և եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան հնարավորություն է տրվում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մասով իրականացնելու մաքսային գործառնություններ՝ առանց տրանսպորտային միջոցներից հեռանալու, **մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն է համարվում պաշտոնատար անձին բանավոր հարցման արդյունքներով ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը:**

Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ մաքսային սահմանով հայտարարագրման ենթակա ապրանքները տրանսպորտային միջոցով տեղափոխող անձը պաշտոնատար անձին բանավոր հարցման արդյունքներով չի ներկայացնում ուղևորային մաքսային հայտարարագիր, ապա դա, ինքնին, համարվում է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն, այսինքն՝ անձը հայտնում է հայտարարագրման պարտավորություն չունենալու մասին: Ընդ որում՝ նշված հայտարարության առնչությամբ կասկած ունենալու պարագայում վարչական մարմինն իրավազոր է իրականացնելու մաքսային հսկողության աշխատանքներ՝ բացահայտելու հայտարարագրման ենթակա ապրանքների առկայությունը, դա կարող է լինել, օրինակ՝ մաքսային զննման կամ օրենքով նախատեսված այլ միջոցներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցով մաքսային սահմանը հատելու ժամանակ իրականացված մաքսային հսկողության արդյունքում հայտարարագրման ենթակա ապրանքների հայտնաբերման պարագայում, այն դեպքում, երբ անձը թաքցրել է այդ ապրանքն այնպիսի վայրում, որ մաքսային մարմնի պաշտոնատար անձը չի կարող հայտնաբերել այն սովորական տեսողական զննման միջոցով, իսկ անձը հայտարարում է նման ապրանքների բացակայության մասին, վարչական մարմինն իրավաչափորեն կարող է արձանագրել հայտարարագրման ենթակա ապրանքները թաքցնելու փաստը, և անձին ենթարկել օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված արարքի զանցակազմն առկա է այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցով մաքսային սահմանը հատելու ժամանակ մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ հայտարարագրման ենթակա ապրանքների առկայության մասին բանավոր հարցմանն ի պատասխան անձը հայտնում է այդպիսի ապրանքների բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հադի Գուլռոզիի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության 05.04.2021 թվականի թիվ 76 որոշումը:

Դատարանը 01.03.2022 թվականի վճռով բավարարել է Հադի Գուլռոզիի հայցը՝ անվավեր ճանաչելով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 05.04.2021 թվականի թիվ 76 որոշումը՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Սույն գործի ապացույցներով հաստատվում է, որ վիճարկվող որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է 06.02.2021 թվականին, երբ կազմվել է Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Մաքսային զննման (տեսազննման)» թիվ 06022021U/12021 ակտը, իսկ վիճարկվող որոշումն ընդունվել է միայն 05.04.2021 թվականին, այսինքն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական վարույթի առավելագույն 30-օրյա ժամկետի խախտմամբ: Ընդ որում, վարչական վարույթի նշված ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որևէ որոշում գործում առկա չէ:*

(...) ո՛չ ՀՀ մաքսային օրենսգրքով և ո՛չ էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով վարչական (մաքսային կանոնների) իրավախախտման վերաբերյալ գործերի վարույթի իրականացման ժամկետի մասով որևէ առանձնահատկություն սահմանված չէ, ինչից էլ ուղղակիորեն հետևում է, որ հիշյալ վարչական վարույթների նկատմամբ ամբողջությամբ կիրառելի են ՀՀ օրենսդրության ընդհանուր կանոնակարգումները, իսկ ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով ժամկետին, ապա դա միայն պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն է՝ այն ժամկետը, որի անցմամբ անձն այլևս չի կարող ենթարկվել պատասխանատվության, որը չի նույնանում վարչական վարույթի ընթացակարգային ժամկետի հետ:

(...) սույն գործով հաստատված է (...), որ վիճարկվող որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթն իրականացվել ու ամփոփվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ՝ արդյունքում վիճարկվող որոշման ընդունմամբ ըստ էության հանգեցնելով հայցվորի նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության, քանի որ վերը նշված 30-օրյա ժամկետի անցմամբ վարչական ակտի ընդունումը հանդիսանում է այնպիսի վարույթային կամ ընթացակարգային խախտում, որի դեպքում վարչական մարմինն այլևս իրավասու չի լինում ընդունել վարչական ակտ, ինչից ակնհայտ է, որ այն չի հանդիսանում ձևական խախտում:

(...) վարչական մարմնի կողմից թույլ տրված գործողությունների հետևանքով իրավական որոշակիության սկզբունքի (կամ փաստացի իրադրության որոշակիության) խախտման դեպքում անձի կատարած արարքը որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես մաքսային իրավախախտում (զանցանք), քանի որ նկարագրված պայմաններում բացառվում է անձի մեղքը, ինչը սույն գործի շրջանակներում ևս առնվազն հարուցում է կասկած, որը չի կարող մեկնաբանվել հայցվորի դեմ:

(...) սույն գործում առկա չէ այնպիսի վերաբերելի ապացույց, որով առնվազն կհիմնավորվեր, որ նախքան հայցվորի ավտոմեքենան զննման ենթարկելը մաքսային կետում մաքսային ծառայողի կողմից նրան փաստացի ու իրական հնարավորություն է տրվել հայտարարագրել հայտարարագրման ենթակա ապրանքները, սակայն նա չի իրականացրել դա՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը կատարելով մաքսային հսկողությունից թաքցնելով:

(...) վիճարկվող որոշմամբ հայցվորը պատասխանատվության է ենթարկվել ոչ իրավաչափ, քանի որ վերջինիս կողմից մաքսային իրավախախտում կատարված լինելու փաստը սույն գործի ապացույցներով չի հաստատվում, իսկ վիճարկվող որոշմամբ արձանագրված արարքն էլ կատարվել է վարչական մարմնի կողմից իրավական որոշակիության սկզբունքի խախտման հետևանքով, ինչը բացառում է նույն արարքը որպես մաքսային կանոնների խախտում որակելու հնարավորությունը»:

Վերաքննիչ դատարանը 09.10.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Դատարանի 01.03.2022 թվականի վճիռը թողնելով անփոփոխ՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) թեպետ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է 07.02.2021 թվականին, իսկ վիճարկվող որոշումը կայացվել է 05.04.2021 թվականին, ինչը նշանակում է, որ տույժ նշանակելու մասին որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների (2 ամիս) պահպանմամբ, այդուհանդերձ խախտվել են վարչական վարույթի իրականացման ժամկետները, քանի որ 07.02.2021 թվականին հարուցված վարչական վարույթի իրականացման օրենքով սահմանված առավելագույն 30-օրյա ժամկետը սպառվել է 08.03.2021 թվականին, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով վարչական վարույթի ժամկետը չի երկարաձգել:*

(...) Վերաքննիչ դատարանը, 05.04.2021 թվականի թիվ 76 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ դրանցով չի հիմնավորվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ նախքան զննման ենթարկելը մաքսային կետում մաքսային ծառայողի կողմից հայցվորին հայտարարագրման ենթակա ապրանքները հայտարարագրելու փաստացի ու իրական հնարավորություն է տրվել, սակայն նա չի օգտվել դրանից և ապրանքների տեղափոխումը կատարել է մաքսային հսկողությունից թաքցնելով: Իսկ հայտարարագրման իրական հնարավորություն չունենալու հանգամանքը, Վերաքննիչ դատարանի համոզմամբ, բավարար է եզրակացնելու մաքսային իրավախախտման դեպքի (զանցանք)՝ վարչական մարմնի կողմից հաստատված չլինելու մասին»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն հանգամանքը, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, սակայն գտել է, որ խախտվել է վարչական վարույթի իրականացման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 30-օրյա ժամկետը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի առանձնահատկությունները կանոնակարգվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի նկատմամբ միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետներ, ուստի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետների մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը վարչական վարույթի առավելագույն ժամկետ սահմանելու մասով կիրառելի չէ *(տե՛ս, Յողիկ Ավետիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/8942/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.12.2022 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կողմերի միջև առաջացած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են նախ՝ ՀՀ մաքսային օրենսգրքի, ապա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավակարգավորումները, իսկ դրանցով չկարգավորված հարաբերությունների մասով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները: Հետևաբար, հաշվի առնելով, որ վարչական վարույթի իրականացման ժամկետները կարգավորված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հետ միաժամանակ կիրառվել չեն կարող, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ անդրադառնալով հայտարարագրման ենթակա ապրանքները թաքցնելու զանցակազմի առկայությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի վարչական վարույթի նյութերից պարզ չէ, թե արդյո՞ք մաքսային մարմնի աշխատակիցների կողմից մինչ հայցվորի ավտոմեքենան զննման ենթարկելը հայտարարագրման ենթակա ապրանք ունենալու վերաբերյալ հարցադրում նրան կատարվել է, և արդյո՞ք նման հարցադրմանն ի պատասխան՝ վերջինս հայտնել է նման ապրանքների բացակայության մասին:

Նշվածը պայմանավորված է նաև նրանով, որ Հադի Գուլռոզիի ներկայացուցիչ Նարեկ Եղիազարյանը 22.03.2021 թվականին տված բացատրությամբ հայտնել է, որ Հադի Գուլռոզին իր կողմից վերցված գույքը ստացել է Սուրանա Դիպակ Կիրկումարից՝ ՀՀ-ում իրավատիրոջը՝ Տիգրան Մեսրոպյանին հանձնելու հանձնարարությամբ: Նրան հանձնարարվել է պատշաճ կատարել բոլոր ընթացակարգերի պահանջները, որի հնարավորությունը սակայն չի ունեցել, քանի որ մաքսավորների կողմից գույքը վերցվել է, **նա էլ բանավոր ասել է, որ իր մոտ կա գույք, սակայն այն վերցվել է**:

Այսինքն՝ Հադի Գուլռոզիի ներկայացուցչի կողմից տրված բացատրությունից հետևում է, որ Հադի Գուլռոզին բանավոր հայտնել է իր մոտ առկա գույքի մասին, սակայն այն վերցվել է մաքսային ծառայողների կողմից: Մինչդեռ, գործի նյութերում առկա Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության ՄԴՊՎ ՍՏԲ Մեղրիի բաժանմունքի մաքսային տեսուչի 24.03.2021 թվականի հայտարարությամբ նշվել է, որ մաքսային տեսուչը Մեղրիի մաքսային կետի բաժնի ուղևորների համար նախատեսված զննման գոտում հարցրել է Հադի Գուլռոզիին, թե արդյոք նա իր մոտ ունի հայտարարագրման ենթակա ապրանքներ, թե՝ ոչ, ինչին վերջինս պատասխանել է, որ չունի այդպիսի ապրանքներ: Այնուհետև, նա «TOYOTA HILUX» մակնիշի ▪▪▪▪▪▪▪▪[4] պետհամարանիշի ավտոմեքենայով մուտք է գործել ավտոմեքենաների համար նախատեսված զննման գոտի, որտեղ եղել են մաքսային տեսուչներ, և Հադի Գուլռոզին իր բանավոր հարցմանը, թե արդյոք ունի հայտարարագրման ենթակա ապրանքներ, պատասխանել է, որ չունի հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Վերոգրյալից հետևում է, որ սույն գործում առկա ապացույցներից Հադի Գուլռոզիի ներկայացուցչի բացատրությունը և մաքսային տեսուչի կողմից տրված հայտարարությունը պարունակում են իրարամերժ տվյալներ, ինչը, ըստ էության, հնարավորություն չի տալիս բացահայտել, թե արդյո՞ք մաքսային տեսուչների կողմից հայցվորին ուղղվել է հայտարարագրման ենթակա ապրանքներ ունենալու վերաբերյալ հարցադրում, և արդյո՞ք դրան ի պատասխան հայցվորը հայտնել է հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոնշյալ փաստերի պարզման պարագայում հնարավոր կլինի հաստատված համարել մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին տրանսպորտային միջոցով մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձի կողմից արված հայտարարության, ըստ այդմ՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման փաստի առկայության մասին, ուստի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու և վերոգրյալը բացահայտելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

---

[4] Հանդիսանում է անձնական տվյալ

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.10.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ